EMBASSY OF THE REPUBLIC OF ARMENIA
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴԵՍՊԱՆՈՒԹՅՈՒՆ

ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Կանադայում ՀՀ դեսպանությունը տեղեկացնում է, որ ՀՀ կրթության և գիտության նախարարությունը ս.թ. հուլիսի 1-29-ը իրագործելու է սփյուռքահայ ուսուցիչների վերապատրաստման 2015թ. ծրագիրը: Այն նախատեսված է վարժարաններում, դպրոցներում, մանկապարտեզներում, մեկօրյա և այլ տեսակի կրթօջախներում դասավանդող հայագիտական առարկաների ուսուցիչների համար: Գործելու են միջին և ավագ դպրոցների ուսուցիչների համար հայոց լեզվի ու գրականության և հայոց պատմության դասավանդման խմբեր:

Հայաստանում գտնվելու ընթացքում ուսուցիչները հնարավորություն կունենան այցելել պատմաճարտարապետական հուշարձաններ, ծանոթանալ Հայրենիքի քաղաքական, մշակութային կյանքին, հանդիպել մշակութային գործիչներին:

Տեղեկացնում ենք, որ Հայաստանում բոլոր ծախսերը՝ կեցություն, սնունդ, այցելություններ հուշարձաններ, թանգարաններ, մշակութային օջախներ և այլն, հոգում է Հայաստանի կառավարությունը, իսկ ճանապարհածախսը (ներառյալ օդանավակայանից մինչև հյուրատուն) հոգում են իրենք՝ ուսուցիչները կամ նրանց գործուղած կրթօջախներն ու կազմակերպությունները:

Հայտերն անհրաժեշտ է ներկայացնել մինչև ս.թ. **մայիսի 31-ը** ներառյալ:

Մանրամասն տեղեկատվությունն ու հայտի ձևը կցված են:

7 Delaware Avenue, Ottawa, Ontario K2P 0Z2
Telephone: 613 234-3710 Fax: 613 234-3444

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

2015 թվականին ՀՀ կրթության և գիտության նախարարությունը շարունակում է արտասահմանյան երկրներում գործող հայկական վարժարաններում, դպրոցներում, մանկապարտեզներում, միօրյա և այլ տիպի կրթօջախներում դասավանդող հայագիտական առարկաների ուսուցիչներին, տնօրեններին/ուսումնական մասի տեսուչներին՝ վերապատրաստման ծրագիրը:

Հայաստանում վերապատրաստումն ընթանալու է ՀՀ կրթության և գիտության նախարարության կողմից հաստատված տարբերակված հետևյալ 6 մեկամսյա ծրագրերով.

Ա. Ուսուցում մանկապարտեզում
Բ. Ուսուցում մեկօրյա դպրոցում
Գ. Տարրական ուսուցում
Դ. Հայոց լեզվի և գրականության դասավանդում
Ե. Հայոց պատմության և հայրենագիտության դասավանդում
Զ. Լրացուցիչ կրթության և արտադասարանային դաստիարակության կազմակերպում (երգ, պար, թատրոն, նկարչություն, ձեռագործ և այլն)

Դասընթացներն ավարտած ուսուցիչներին կտրամադրվեն ՀՀ կրթության և գիտության նախարարության վկայագրեր:

Գործող ուսուցիչների համար մասնակցության սահմանափակումներ չկան:

Ծրագրի ընթացքում դասընթացների կազմակերպման, ուսուցիչների կեցության և շրջագայության ծախսերը, ծրագրի բացման օրվանից մինչև փակման օրը, ստանձնում է Հայաստանի Հանրապետությունը: Ճանապարհածախսը, ներառյալ օդանավակայանից մինչև հյուրատունը և Հայաստան մուտքի արտոնագրի (վիզա) ծախսերը հոգում են մասնակիցները կամ համապատասխան կազմակերպությունները, կրթօջախները, բարերարները:

Վերապատրաստման սկիզբը համարվում է ծրագրի մեկնարկային օրը՝ հուլիսի 1-ը:

Ծրագրի ժամանակացույցը հետևյալն է.

30 հունիսի՝	հյուրատուն մուտքի և տեղավորման օր
1 հուլիսի՝	ծրագրի բացում
29 հուլիսի՝	հյուրատանից ելքի օր:

Ավելի վաղ ժամանելու/ուշ մեկնելու պարագայում մասնակիցների համար կսահմանվեն հյուրատանը մնալու զեղչված գներ:

Ծրագրին մասնակցելու համար անհրաժեշտ է մինչև **մայիսի 31-ը** ներառյալ ՀՀ կրթության և գիտության նախարարություն ներկայացնել.

1. Ուսուցչի կողմից լրացված և կրթօջախի տնօրինության կողմից վավերացված հայտը (հայտաձևը կցվում է),
2. Համայնքի, ուսումնական հաստատության կամ կազմակերպության կողմից տրված գործուղման տեղեկանք:

Մասնակցության պաշտոնական հաստատումներն ուսուցիչները կստանան իրենց էլեկտրոնային հասցեով մինչև հունիսի 8-ը ընկած ժամանակահատվածում: Պաշտոնական հրավերի անհրաժեշտության դեպքում՝ խնդրում ենք տեղեկացնել նախապես:

Ծրագրերի ընդհանուր նկարագիրը և հիմնական դասախոսների ցանկը, ինչպես նաև հյուրատան հասցեն և կեցության հետ կապված այլ տեղեկություններ կփոխանցվեն մասնակցության հայտ ներկայացրած ուսուցիչներին հունիս ամսվա ընթացքում:

Մասնակիցների համար նախատեսվում են նաև հանդիպումներ, ճանաչողական-ուսուցողական շրջայցեր և մշակութային ծրագիր:

Հավելյալ տեղեկություններ կարելի է ստանալ ՀՀ կրթության և գիտության նախարարության Սփյուռքի հետ կապերի բաժնից.

Հեռ. 374 10 58-13-91

Ֆաքս. 374 10 52-73-43

Էլ. փոստ. spyurq@yahoo.com կամ info@edu.am

Առդիր՝ մասնակցության հայտաձև /1 էջ/:

ՍՓՅՈՒՌՔԱՀԱՅ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ-2015
ՀՀ կրթության և գիտության նախարարություն

ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՀԱՅՏ

1. Անուն_____ 2. Ազգանուն _____

3. Երկիր _____ 4. Քաղաք _____

5. Դպրոցի անվանում _____

_____

6. Կապի տվյալներ.

Ձեր հեռախոսահամարը._____

E-mail (պարտադիր է)_____

7. Ի՞նչ մասնագիտություն ունեք _____

8. Քանի՞ տարվա ուսուցչական փորձ ունեք. _____

9. Քանի՞ տարվա ղեկավարման կամ տեսչավորման փորձ ունեք /ղեկավարների համար/.

10. Ո՞ր օղակում կամ ո՞ր դասարաններում եք դասավանդում կամ ղեկավարում /նշեք նաև երեխաների տարիքը /_____

11. Ի՞նչ առարկա(ներ) եք դասավանդում.

_____ _____

_____ _____

12. Նախկինում մասնակցե՞լ եք, արդյոք, վերապատրաստման դասընթացների: Եթե այո, ապա նշեք՝ երբ և որտեղ. _____

_____

13. Ի՞նչ ծրագրով կցանկանայիք վերապատրաստվել /նշեք միայն մեկը/.

Ա. Մանկապարտեզ
Բ. Մեկօրյա դպրոց
Գ. Տարրական ուսուցում
Դ. Հայոց լեզու և գրականություն
Ե. Հայոց պատմություն և հայրենագիտություն
Զ. Լրացուցիչ կրթություն

14. Ունե՞ք հյուրատան կարիք Երևանում.

Այո ☐ Ոչ, Երևանում մնալու տեղ ունեմ ☐

15. Դպրոցի տնօրենի կամ կազմակերպության ղեկավարի ստորագրություն, կնիք

_____